ԱՐՄԱՏԱՍԷՐ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԳԱՆԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐՈՒՄՔԻՒՆ

Ամերիկայի համար տարեկան 4 ոսկւոր թղթադրամ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարին. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնէգիրները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց սակէ յաւելման բաժնէգիրին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 վայն։

Բ ՏԱՐԻ ԹԻԻ 60

1887 ՄԱՐՏ 19

ՄԱՐՏ 7 (Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

Կը հրատարակուի Դ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանթիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանթիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պէշիկթաշի Գերեզմանատան խնդիրը.— Հայ կրօնի դասախօսութիւնն ի Թուրքիա.— Բաղուածներ Թուրքիայի հայ լրագիրներեն.—Գամառ Քարիպա. —Նամակ Ռուսիահեն (Մոսկվա).—Նամակ Աւստրօ-Հունգարիահեն (Սուչաւա). — Նամակ Գաղիահեն (Պուամուգ). — Վարդանանց հանդէսն Յեգիպտոս (Ալեքսանդրիա). — Նամակ Ռումանիահեն (Գուքրէշ). — Նամակ Ռումանիահեն (Պրայիլա).—Արտասահմանի լուրեր. —Յանուցումներ. — Բանասիրական (Հայգոյժ)։

ՊԷՇԻԿԹԱՇԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԽՆԴԻՐԸ

Կրօնական և Քաղաքական ժողովները փետր. 27/11 մարտին Խառն ժողովով կազմած են դարձեալ Պէշիկթաշի գերեզմանատան լինդբին վրայ խորհրդակցելու համար. բայց դարձեալ չեն կրցած համաձայնուիլ։ Ինչպես յայտնի է, Քաղ. ժողովը գերեզմանատունը յանձնելու կողմն է. իսկ Կրօնական ժողովը կըսէ թէ մեռելները գերեզմանները բանալով ոսկորները այլուր փոխադրելը կը դպչի հայ ժողովրդի կրօնական զգացման և թէ պէտք է կրօնականներէ և աշխարհականներէ բաղկացեալ մի պատուական պատգամաւորութեան միջոցով աղերսագիր ի ձեռին դիմել Վեհ. Սուլթանին և ազատիլ որ լինայէ իւր հաւատարիմ հայ հպատակներուն սրտոց կը ըօնական զգացումը պիտի վիրաւորուի իրենց ծնօղներուն և ազգականներու վերջին հանգստարանն տակն ու վրայ լինելով։ Այլն։ Քար. ժողովը վերջապէս համաձայնուեր է Վեհ. Սուլթանին մի դիմում անել, բայց առարկեր է թէ դրաւոր կերպով պէտք չէ դիմել, այլ բերանացի միայն։ Կրօնական ժողովը անհրաժեշտ համարեր է աղերսագիրը տալ պատգամաւորութեան ձեռքով, դիտել տալով որ դրաւոր եղած ժամանակ կարելի է նախապէս կշռել և որոշել այդ դրութեան մէջ ամեն նկատումները. նաեւ շատ անգամ կը պատահի որ այդպիսի պատգամաւորութիւնները չեն ներկայացուիր ուղղակի Սուլթանին, այլ Սուլթանին կողմէն մէկը կուգայ և կընդունի դիրքը, մինչդեռ աղերսագիրներն անպատճառ կը մնատուին Սուլթանին։

Քար. ժողովը պատասխաներ է թէ աղերսագրով դիմելու մասին մի վերջնական որոշում տալու համար հարկ կը համարի որ իր ամբողջ անդամներէն ներկայութեամբ մի նիստ առնէ և խորհրդակցի այդ կէտի վրայ։ Քար. ժողովի անդամներէն Նաբեան էֆէնտին բացակայ կը դտնուէր նաեւ Խառն ժողովի այդ նստի։

Փոստով ստացուած «Արեւելք» լրագրի վերջին թուին (փետր. 28/12 մարտ) մէջ կը կարդանք թէ Ամեն. Գատրիարքը հարը նոյն օր կէս օրի առեն նէրն (լրագիրը մամուլը դրուած ժամանակն) Բ. Դուռն է գնացեր։

ՀԱՑ ԿՐՕՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆ Ի ՌՈՒՍԻԱ

Ռուսիոյ Կրթական նախարարութիւնը յատուկ հրամանագրով իմացուցած էր որ այսուհետեւ կրօնուոյց հայ քահանայներն պէտք է որ ռուսերէն լեզուաւ աւանդեն կրօնի դասերն Կովկասի քաղաքային վարժարաններուն մէջ գտնուող հայ աշակերտներուն, մինչդեռ մինչեւ այժմ հայերէն լեզուաւ կը տրուէին այդ դասերը, ինչպէս որ բանականութիւնն ու օրէնքն ալ այդպէս կը պահանջեն։ Կրթական նախարար Պ. Տելիանովի այդ որոշման վրայ, հայ քահանաներն դիմած էին իրենց տեղական Առաջնորդներուն հրահանգ տուտնալու համար. Առաջնորդ Սրբազաններն ալ դիմած էին Վեհ. Մակար Կաթողիկոսին։ Ա յժմ կիմանանք որ Վեհ. Կաթողիկոսը Առաջնորդներէն իրեն եկած նամակներուն պատասխանելու համար մի կոնդակ հանած է որ կիմայտնէ թէ Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան համեմատ կրօնի և եկեղեցական պատմութեան դասերն անպատճառ հայերէն լեզուով պէտք է տրուին հայագիր աշակերտներուն ամեն վարժարաններուն մէջ և պէտք է որ այդ դասախօսութեան մասին հսկողութիւն ընեն Գեր. Առաջնորդներն և կամ իրենցմէ կարգուած եկեղեցականներն։

Վեհ. Կաթողիկոսի այս կոնդակի վրայ յենելով, Գեր. Առաջնորդներն հրամցած են կրօնուոյց քահանայներուն որ քանի առաջնոյն հայերէն լեզուով միայն տանդեն կրօնի դասերն։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ԼՐԱԳԻՐՆԵՐԷՆ

Կարնոյ առաջնորդ Սրբազանը և Վանի Պատրիարքականփոխանորդ Սրբազանը իմացուցած են Պատրիարքարանին թէ Թիւրք կառավարութեան կրթական տեսուչները այցելելով հայ վարժարանները՝ տեղեկութիւններ կը պահանջեն ուսուցչական ընթացքին, ուսուցիչներուն և այլնի վրայ։ Երզրումի կրթական տեսուչը մինչեւ իսկ յայտարարեր է հայ վարժարանների ուսուցիչներուն թէ առաջնորդները իրաւասութիւն չունին բնաւ վարժա-

---

Ի՞նչ անդատաստան կը խօսիս դու հէգ ողբերգու. իրաւ գառանցող բանգադո՞ւչ կը լինիս, կարծելով թէ աչխարհիս վերայ կիներ սուր և բազո՞ւկ ունին, մինչ քաղարազուկ հուժկու այրեր կը վատանան իրենց ընտանեկան պատուիրը մահու չափ պաշտպանելու. դու գիտես թէ քանի՞ դժուարին է որ տկար ու տանտիկին կիներ դիւցազնանան—: Այո՛, այդ գիտեմ, բայց միթէ չառաքինացա՞ն Հայոց աչխարհի կանայք ու տիկնայք, մինչ նոցա այրեր չղթայակապ վարեցին ի Խուժաստան. նոքա անայր և անէծրուն մնացին. կանայք տկարութեան անտար վիչտերու դէմ մրցեցին, Գարսկաստան կրակին դէմ անվախ մնացին, կրօն, հաւատ և սուրբ կեանքը անարատ պահեցին, որոյ չնաչխարհիկ առաքինութեան հանդէսը ճառագրելով կը հռչակէ Տ. Եղիշէ վարդապետ։

Մովսէ՛ս, Մովսէ՛ս, Նագրեւանդայ վիճակին ծերունի՛ առաջնորդ, դու գՀայոց աչխարհ և քո ժամանակ ողբացիր և ի հող մատաղ հանդչեցար, այլ եւս չգիտես թէ քո անթագ, անգաւազան, սարկացեալ հայրենեացդ ողբերը դադրեցա՞ն — : Ո՛չ, ո՛չ, ասս դար անցաւ, տակաւին ողբերդ դառնապէս կը նորոգուին. դու այժմ գլուխդ գերեզմանդն ի վե՛ր առ, տես քո սիրելի հօտին վերահաս ազէտները, քառնասր գայլոց վհմակ յարձակեցան, գառներդ կոտորեցին, որոց յորդահոս արիւնը՝ չերմիդ կ՚ոլորեն և կ՚ինչեն մինչեւ ի հող տապանիդ հեծող ոսկորներդ։

Դու ինչպէս տեսնելով կողբագրէիր. արդ եւս արհաւիրք անհնարինք պատեցին զՀայոց աչխարհ, մասր՝ թէ ի ներքուստ և թէ արտաքուստ զմեզ պաչարեց, հայրենիքը թափուրացաւ, մնացորդ որդիներուդ կէսը՝ թողով բնականունդ երկիրը, գաղթական գնաց, կէսն եւս անխնայ կոտորուեցան սուրբ կրօնի համար և Հայոց հաւատոյն համար։

Եփրա՛տ, Եփրա՛տ, մկրտարա՛ն Սուրբ Գրիգորի հոգեծին որդւոց, ափունքներուդ վերայ լինած դիակները՝ արեան հեղեղներ թաւալգլոր բերելով քո ծոցը կը թափեն, և դու տո՛ւր ալիքներուդ՝ թո՛ղ գլորէ տանի մինչեւ Ովկիանոս ափունքը. Հայոց աչխարհի անմեռնէ բողբն է այդ։ Կը լսէ՞ արդեօք և կը տեսնէ՞ աչխարհի արեան հանդիսատես խա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԳՈՅԺ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԷՆ

Գրեց եւ աշխարհագրուժեց

ՄՐՔՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

(Շար. 59 րդ բուհն)

Ջո՞րն պատմեմ. մայրենի գրկերէն ձըղուած դեռեկի մանուկներ տեսնող գըլանուեցաւ ու պատմեց թէ՝ մի մանկիկ եւս Եփրատայ ափանց ալիքներու մէջ ձգուած էր, ինչպէս Մովսէս՝ Նեղոս գետին խաղեր. մեր խեղճ մանուկը՝ պատուհաս աքնատուկին մէջ կալրաձիւթով պատած չէր, այլ այնպէս բացօդեայ ձգուած. խե՛ղճ անմայր տղեկ, կաիան բառնալով կը լար. Լսեց մի դիւղական աղջիկ որ նա եւս կը թագուցանէր գինքն գետերի մացառներու մէջ, սիրտ արաց, ձայնի հետ գնաց գտաւ ընկճելիկ մանուկն. դիւզացի քոյ աղջիկ որ դեռ մայր չէր եղեր, մայրենի դորովով խաղացատեցաւ տղեկին վերայ, ինչպէս փարաւոնի դուստրն, առաւ տարաւ մերձակայ գիւղ մի, ասաց թէ՝ Եփրատեան եղերքը չամբերուն մէջ գտայ։

Ես չգիտեմ թէ ողջ մնացի՞ր դու, անհայր անմայր որբացեալ մանուկ, ո՞ր օտար մայր քեզ կաթ սիրտ տայ և անուցանէ, մինչ քո բուն ծնող մայրդ՝ առ նեղութեան ու վշտին, զքեզ անմայր թողուց։ Ո՛ տատապանաց և դառնութեան օր, որ կաթոդին մայրերուն բնական գորովն ու գութը մոռնալ կը տաս և սրտէն ի բաց կը հանես որդեկին սէր որ մոր ազիքն ու սրտին հատորիկն է։

Ողջա՛ր զձեզ, հա՛յոց մայրեր, որ կորուսիք ձեր լծակից ամուսինները և սիրական. զատակներ թէ մեռաք՝ երանի՛ ձեզ. իսկ թէ ողջ մնացիք՝ եղո՛ւկ ձեզ։ Ա՜հ, ի՞նչ կը լինէր որ դուք եւս այն Մշեցի դիւցազն կնոջ պէս զօրանայիք ձեր հալածանաց և վշտակրութեան մէջ կամակար մեռնիլք ձեր սուրբ կրօնի համար, ձեր զաւակաց սիրոյն համար, ձեր հաւատ պատկառանաց համար, միթէ այժմ կապրի՞ք դուք, և լաւագոյն չէ՞ր ձեզ մեռնիլ քան զայդ չարաւիշտ կեանքը։

ՄԱՐՏԻ 12, 1887 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Ի ՄԱՀ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԱՆ

Ուրբաթ, մայիս 22/6 տարի 1887

Ընդունում ենք ամեն տեսակ յայտարարութիւններ։ Տեղը առանձին վճարվում է։

ԴՊՐՈՑԱՍԻՐԱՑ ԿՅԱՆՔԻՑ

ԶԱՄՍ

Ի՞նչ եղավ մեզ մանկութեան տարիներում, երբ մենք ամեն առաւօտ ուրախ սրտով գնում էինք դպրոց, ուր մեզ սիրով ընդունում էին մեր ուսուցիչները, ուր մենք ամեն օր նոր բան էինք սովորում, ուր մենք ամեն ժամ ուրախ էինք անցկացնում։ Ի՞նչ եղավ մեզ, երբ մենք դուրս եկանք դպրոցից, երբ մենք մտանք կեանքի մէջ։ Ինչպէս ամեն մարդ, որ ծնուել է այս աշխարհում, մենք էլ ունեցանք մեր ուրախութիւնները, մեր տխրութիւնները, մեր յաջողութիւնները, մեր անյաջողութիւնները։ Ամեն մարդ, որ ապրում է այս աշխարհում, ունի իր ուրախ ու տխուր օրերը, ունի իր յաջողութիւնները ու

—Սօֆիայէն մարտ 18ին կը հեռագրեն որ անդ ձերբակալուած բոլոր Զանգոֆեանները արձակուած են, իսկ Քարավէլոֆ և իւր բարեկամները տակաւին կը մնան արգելքի տակ։ —Եօքարի–Գանիան տաք ջրի աղբիւրները յայտնուած են. կը վախցուի որ երկրաշարժ տեղի ունենայ, որովհետեւ մարդ չյիշեր բնաւ որ ուրիշ տաեն յայտնուած լինին։

— Պէրլինէն կը հեռագրեն «Սթանտարտ»ի. «Մեծ ուշադրութիւն դարձուցած են այստեղ այն բանակցութիւնների վրայ որոնք Սըր Տ. Ուօլֆ Սուլթանին ներկայացուցած առաջարկների համար կը լինին։ Կը կարծուի որ այս առաջարկները Ալմանիա, Իտալիա և Հաւանօրէն Աւստրիայի կողմէն կը քաջալերուին։ Պ. Վէսէֆֆի վերագրուած այն յայտարարութիւնը թէ Ֆրանքօ–Անգլիական մի պատերազմ անխուսափելի պիտի լինի եթէ գէթ նախկին Խով Խանյիլ փաշան չվերահաստատուի. կը կարծուի թէ մի միջոց Մեծին Բրիտանիայի մէջ հասարակային կարծիքին վրայ ճնշում բանեցնելու համար։ Ոչ ոք կը հաւատայ թէ Անգլիա հաւանի նեղոսի վրայ Ֆրանսական առաւելակերտութեան վերահաստատման։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

De l'Ê (É)
ou
Du positif de l'Etre
qui est l'objet
de la science positive

De l'unité des lettres ou principe de la voix et de son harmonie absolue qui constituent l'objet des sciences logique musique et mathématique
par
le DOCTEUR S. TAVITIAN
prix 3 francs
Paris - 1887

—

pour le recevoir franco,il faut adresser un mandat-poste de 3 francs à la redaction du journal "Arménia,,

Հեղինակը Տօքթօր Սահիան Էֆֆենտի Դաւիթեան կը յանձնայ այս հրատարակութիւնով ցոյց տալ ընդհանուր մարդկային լեզուների մէջ եղած բացարձակ ներդաշնակութիւնը և միանգամայն հայերէն տառերի հնչումներուն կատարած գլխաւոր դերը այդ ձայնական միութեան մէջ։ Տետրակը նուիրուած է ողբացեալ Սերովբէ Էֆֆենտի Կիւլպենկեանի յիշատակին և իւր եղբայր Մարգիս Էֆֆենտուն։ Կը ծախուի 3 ֆր.ի։

LA TRIBUNE DES PEUPLES

Revue internationale du mouvement social dans les cinq parties du monde.

Rédaction et administration : Librairie des Deux Mondes, Paris, 17, rue de Loos,

Abonnement France : Un an 5 fr., Union postale, 6 fr.

Sommaire du n° 8, Novembre-Décembre :

Des principaux facteurs de la rénovation humaine. — CASSIUS. *Persécutions et aggravations des troubles en Arménie.* — UN ARMÉNIEN. *Lettre du Paraguay.* — J.-B. TRUQUEN. *De la décadence de la vue chez les peuples civilisés.* — Dr ROSELLI. *L'anniversaire de la mort de Louis Riel au Canada.* — C DUMONT. *La question ouvrière en Saxe.* — KARL WEBER. *Letlre des Etats-Unis.* — F. TUFFERD. *Mouvement international. Europe :* Bulgarie, France, Grèce, Portugal, Roumanie, Serbie. — *Asie* : Japon. — *Afrique :* Maroc. — *Amérique du Nord :* Antilles. — *Amérique du Sud.* — Brésil, Chili, Pérou, Uruguay. — *Océanie :* Australie, Ile, Timor.

Revue bibliographique internationale.

Un numéro de cette revue est envoyé à titre d'envoi, *gratis* et *franco*, à tous ceux de nos lecteurs qui en feront la demande à la Librairie des Deux Mondes, Paris, 17, rue de Loos, avec le Bulletin donnant l'analyse des publications en vente à cette librairie.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՅԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԵԼԻ » 40 »

Կը ծախուին Մարսէյլ, «Արմէնիա» լրագրի խմբագրատունը։

Օտար քաղաքացիներին կը դրկուի փոստով, երէ վերոյգրեալ գիներուն ֆրանսական, բրքական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Արմէնիա»ի խմբագրութեան։

ԳԱՄԱՌ–ՖԱԹԻՊԱՑԻ ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիսի հայ. գրբ. հրատրկր. ընկերքէ.»

Մեծանուն բանաստեղծ Գամառ–Քաթիպան (Ռ. Գաթականեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Գամառ–Քաթիպան բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներուն, աւելորդ կը համարինք գրել այդ մասին։

Կը ծախուի «Արմէնիա» լրագրի խմբագրատունը և դէն 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքովը հանդերձ։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. Փ. ԱՋԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
(Արամեան)

1887 տարւոյն Ընդարձակ Օրացոյցն հրատարակուեցաւ նախորդ տարիներէ չատ աւելի ճոխ։

Բովանդակութիւն

Բացի բուն Օրացոյցէն կը պարունակէ հետեւեալ վիճակագրական կարեւոր գիտելիքները։ Օսմանեան կայսրութիւն, — Աւագանի կայսերական պալատան, —Նախարարք Բ. Դրան, —Մեծ պաշտօնատարք Մայրաքաղաքիս, —Հրամանատարք բանակաց, —Կուսակալք նահանգաց, — Գատրիարքարանք և ազգապետք, —Օսմանեան դեսպանք, —Դեսպանք օտար տէրութեանց, — Վիճակագրութիւն Օսմ. կառավարութեան, — Հայազգի ատիճանաւորք և պաշտօնեայք Օսմ. տէրութեան, — «Հայրապետութիւն Հայոց», —Եպիսկոպոսունք, — Ազգ. կեդրոնական վարչութիւն, — Ճանճնամժողովք, —Պաշտօնեայք Պատրիարքարանի,–Առաջնորդութիւնք Թուրքիոյ, իեմք նոցա և տունք, —Հովուութիւնք, — Մայրավանք Թուրքիոյ, —Թաղօրայք Կ. Պոլսոյ, —Համագումար թաղօրէից, — Բարեգործական և կրթական հաստատութիւնք, —Առաջնորդութիւնք ի Ռուսաստան և այլն,–Մայրավանք ի Ռուսաստան և այլն, – Կայսերական դերդաստան Ռուսիոյ, —Հայազգի ատիճանաւորք և պաշտօնեայք Ռուսական, Պարսկական և այլևայլ տէրութեանց,–Հոգեւոր Հայ հաստարակութիւն,–Քաղաքական Հայ հաստարակութիւն, — Դատաստանք պետական ուսումնարանի, —Բժշկք քաղաքական և զինուորական, – Փաստաբանք, – Արուեստագէտք, – Լրագիրք,–Հեռագրութիւնք Թուրքիոյ և միջազգային,–Եւրոպական միջազգային թղթատարութիւնք,–Եւրոպական դատախաստունք,–Ցամաքային թղթատարութիւն Ասիական Թուրքիոյ,–Ժամացոյց սուրհանդակաց Օսմ. միջազգային թղթատարութեան,–Ծուցակք երթեւեկութեանց շոգենաւուց այլևայլ ընկերութեանց,–Պատկեր 1887 թուին, – Վիճակագրութիւնք օտար տէրութեանց, – Աղբ.–Ծանուցմունք։

Ներկայ տարւոյ Ընդարձակ Օրացոյցի ընդարձակութիւնը 320 երեսներու բարձրացած է։

Կը ծախուի «Արմէնիա» լրագրի խմբագրատունը։ Գինը 75 սանթիմ փոստի ծախքը կը վճարէ խմբագրատունը։

Պարզ ՕՐԱՑՈՑՑԸ որի մէջ կայ Վեհ. Մակար Կաթողիկոսի պատկերը, կը դրկուի փոստով 30 սանթիմի վճարելէն։

ԲԱՑՑԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՒԱԾ Ը

Ազգային վիպագիրը Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐԸ։ Ա՛յս գիրքը կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի վարուելակերպին և հայերի դրութեան, վերքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի լաւ գրքով մը իրր ազգային ընտիր վիպասանութիւն և մէկ իրր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տունը։

***

ՋԱԼԱԼԷԴԻՆ

1877ի ռուս–թիւրքական պատերազմի ժամանակ Եէյլա Ջալալէդդինի արշաւանքին պատճառով Տաճկաստանի հայերի կրած ազէտներուն մէկ ազէտալոյծ նկարագիրն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Պ. Րաֆֆիի պատկերը։

***

Վերոյիշեալ երկու գիրքերը կը ծախուին «Արմէնիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՅԾԵՐԸ Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար փոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՅԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 50 սանթիմ։

Ց. Հ. ԿՐԻԴ ԵՒ ԸՆԿ.

Գտանցբօր Ն. Ու. Բ. Անգլ. Հնդկաստան

—

Ներածող և արտածող վաճառականն, յանձնակատար, ապրանքաբեռնութեան յանձնակատար, մեծ քանակութեամբ ապրանքների պայմանագիր (քօնթրաթճի) և ամեն տեսակ կալչի գործարանատէր։

Վերոյիշեալ զանազան ճիւղերին մէջ երկար ժամանակէ փորձառութիւն ունենալով, պատրաստ ենք յանձնարարութեամբ ընդունել վաճառքներ, պայմանաւոր վաճառման կամ հրատարակային աճուրդի համար, այնպիսի պայմաններով որ վճարադարձաբար չտահաբեր և գոհացուցիչ լինին։

Եւրոպական վաճառքներու փոխանակութեամբ մենք կրնանք ղրկել ինչ քանակութեամբ ալ որ ուզուին, Հնդկաստանի մէջ գործուած ապրանքներ, առաջին կարգի ընտիր տեսակներէ, ինչպէս

Լաքնահօդայ մանկական խաղալիկները, Բնարէսի արոյր և ոսկեճամուկ չուխա, Մօրադաբադայ արծրեայ առնօթներ, Ցէհլու ոսկեայ և արծաթեայ գոհարեղէններ, կաշմիրայ չալեր, կերպասներ, եւն։

Ընդարձակ տեղեր ունենալով յանձնարարուած ապրանքները ցոյցի դնելու և ծախելու համար, մենք կարող ենք ամենայն վստահութեամբ յանձնարարել մեր տունը ամեն անոնց որ կուզեն գործով յարաբերութեան մտնել մեզ հետ և մենք չատ ուրախ պիտի լինինք եթէ տեղեկութիւններ և օրինակցուներ ընդունինք այս նպատակով։

Մեր տան մասին տեղեկութիւն առնելու ուզողներն կարող են դիմել հետեւեալ դրամատուներին։

BANK OF BENGAL
ROHILCUND ET KUMAON BANK
AGRA BANK LIMITED

Եթէ պէտք լինի, պատրաստ ենք ուրիշ տեղեր ալ ցոյց տալ տեղեկութիւնների (références) համար։

Ուէֆ բան մեզ հաղորդելու համար պէտք է ուղղակի դրկել մեզ անգլիերէն կամ հայերէն լեզուով և մանրամասնօրէն, առաջարկուած գործին վերաբերեալ պայմաններն և գաշինքն ներկայացնելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ,
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.